

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴԵՐՄՈՑԱՆ ԼՈՒՄԻՆԵ ԱՂԱՍՈՒ

**ԼԱՏԻՆԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ
ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ**

**ԺԳ.00.02 – «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա»
(լատիներեն լեզու) մասնագիտությամբ
մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՄԵՂՄԱԳԻՐ

Երևան 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝

Մանկավարժական գիտությունների
թեկնածու, պրոֆեսոր **Կ. Ա. Հայրյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Ի. Կ. Կարապետյան**

Բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ **Մ. Ռ. Հարությունյան**

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է **2016թ. մայիսի 12-ին՝** ժամը **12⁰⁰-ին**, Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՂ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, ֆ. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. ապրիլի 12-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝



Ա. Հ. Սվաջյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը. Հայաստանի Հանրապետության բուհական համակարգի վերակառուցման շրջանակում առաջնորդվելով բոլոր առարկաների ուսուցումը բարելավելու հրամայականով, հարկ եղավ անդրադառնալ օտար լեզուների ֆակուլտետում լատիներենի ուսուցմանը, որի բովանդակությունը հիմնականում չի բավարարում մերօրյա պահանջներին: Տվյալ խնդրի իրականացման հիմքում ընկած է լատիներենի դասավանդման ավելի արդյունավետ մեթոդական համակարգի մշակումը, որն ինքնին ենթադրում է այդ առարկայի ուսուցման բովանդակությունն արդիականացնելու հետազոտական աշխատանք:

Սույն հետազոտությունն իր ուրույն առանձնահատկությունն ունի, որը կապված է լատիներենի հաղորդակցական խիստ սահմանափակ գործածության ներկայիս պահանջարկի հետ: Երբեմնի առաջատար այդ դասական լեզվի դասավանդումը, որը հարուստ ավանդույթներ է ունեցել, ինչպես արտասահմանում, այնպես էլ մեզանում, այժմ բարձիթողի վիճակում է, քանի որ, ի համեմատ ժամանակակից օտար լեզուների, լատիներենի ուսուցման բովանդակությունը բարելավելու ուղղությամբ հայկական մանկավարժական իրականության մեջ մեթոդական հետազոտական աշխատանք գրեթե չի իրականացվել:

Լատիներենի ուսուցումը հանդիսանում է պարտադիր դասընթաց թե՛ մանկավարժական, և թե՛ բանասիրական ուղղվածության օտար լեզվի մասնագետների պատրաստման գործընթացում: Ռոմանագերմանական լեզուների ֆակուլտետներում լատիներենի ուսուցման առկա դրվածքի մեր նախնական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով այդ դասընթացի առջև դրված ոչ գործնական, ոչ էլ կրթադաստիարակչական և մշակութային նպատակներն ըստ հարկին չեն իրականացվում: Ուստի խնդիր դրվեց նախ՝ ուսումնասիրել լատիներենի դասավանդման միջազգային առաջավոր և օրինակելի փորձը, այնուհետև համադրաբար վերլուծել մեզանում այդ լեզվի ուսուցման և յուրացման հետ կապված համալիր գործոնները, որոնք հնարավոր դարձրին կադապարել ավելի արդյունավետ դասընթաց մշակելու հիմնադրույթները:

Որպես առաջադրված հիմնախնդրի իրականացման կարևորագույն գործառույթներ անհրաժեշտ էր՝

➤ համակողմանի հետազոտել օտար լեզուների մասնագիտական, մասնավորապես՝ մանկավարժամեթոդական ուղղվածության ֆակուլտետում լատիներենի ավանդական ուսուցման բովանդակությունը,

➤ հստակեցնել լատիներենի ուսուցման և յուրացման արդյունավետության բարձրացման հիմնական լծակները՝ նպատակները, մոտեցումները, սկզբունքները, մեթոդները, եղանակները և միջոցները,

➤ մշակել լատիներենի ուսուցման բովանդակությունը բարելավելու համալիր միջոցներ և կազմակերպել համապատասխան գիտափորձ:

Հետազոտության նպատակն է մշակել «Լատիներեն լեզու» առարկայի ուսուցման բովանդակությունը բարելավելու տեսական դրույթներ և փորձաքարական ուսուցման միջոցով բացահայտել դրանց փաստացի արդյունավետությունը:

Հետազոտության օրկեկտը լատիներեն լեզվի ուսուցման գործընթացն է օտար լեզուների ֆակուլտետում:

Հետազոտության առարկան լատիներեն լեզվի ուսուցման բովանդակության արդիականացումն է մանկավարժամեթոդական ուղղվածության օտար լեզուների ֆակուլտետում:

Հետազոտության վարկածը. Ռոմանագերմանական լեզուների դասավանդման բնագավառում մասնագիտացող ուսանողների համար «Լատիներեն լեզու» դասընթացի արդյունավետությունը կարելի է էականորեն բարելավել, եթե՝

➤ բացահայտվեն և հաշվի առնվեն լատիներենի ուսուցման և յուրացման առանձնահատկությունները, որոնք զգալիորեն տարբերվում են ժամանակակից օտար լեզուների համապատասխան գործընթացներից,

➤ հստակեցվեն ուսուցման գործնական նպատակները և դրանց իրականացումը ներդաշնակվի կրթադաստիարակչական և մշակութային նպատակների հետ,

➤ մեթոդակալի և առնչակից գիտությունների տեսանկյունից սահմանվի ուսուցման ենթակա լեզվանյութի՝ բառերի, արտահայտությունների և հանրահայտ դարձվածքների քանակական և որակական կազմը, ինչպես նաև քերականական առավել գործածական երևույթները,

➤ որպես ուսումնամեթոդական հիմնական բազա գործադրվեն ուսուցողական պատշաճ ներուժի բնագիր տեքստեր և արդյունավետ վարժություններ,

➤ ուսուցման արդիականացված բովանդակությունը գործնականում նպաստի սովորողների ուսումնառության ակտիվացմանը և առարկայի նկատմամբ ճանաչողական հետաքրքրության խթանմանը:

Հետազոտության առաջադիր խնդիրները.

➤ ուսումնասիրել լատիներենի ուսուցման գործընթացի վերաբերյալ մանկավարժամեթոդական, լեզվաբանական, հոգելեզվաբանական, լեզվամշակութաբանական և առնչակից այլ գիտությունների գրականություն,

➤ բացահայտել լատիներենի ուսուցման ներկայիս բովանդակության առանձնահատկությունները, վեր հանել դրանց բացասական կողմերը, վերլուծել այն հայեցակարգերը և մոտեցումները, որոնք հիմք կհանդիսանան այդ գործընթացն էականորեն բարելավելու համար,

➤ հստակեցնել լատիներենի դասավանդման մեթոդական համակարգի հիմնական բաղադրիչները՝ ուսուցման նպատակները, սկզբունքները, մեթոդները, եղանակները, միջոցները, ինչպես նաև բառանյութի, քերականության և հաղորդակցական ունակությունների նվազագույնը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքում ընկած են ինչպես լատիներենի, այնպես էլ ժամանակակից օտար լեզուների ուսուցման և յուրացման վերաբերյալ այն հայեցակարգերը, մոտեցումներն ու սկզբունքները, որոնք ձևավորվել են մեթոդիկայի, լեզվաբանության, լեզվադիդակտիկայի, հոգեբանության, հոգելեզվաբանության և այլ գիտությունների շրջանակներում:

Հետազոտության մեթոդները. Աշխատանքում առաջադրված վարկածի հիմնավորման և խնդիրների լուծման համար կիրառվել են հետազոտության հետևյալ մեթոդները՝ քննարկվող թեմայի վերաբերյալ գիտամանկավարժական գրականության ուսումնասիրում, տեսական վերլուծություն և համադրում, մանկավարժամեթոդական ուղղվածության օտար լեզուների ֆակուլտետում «Լատիներեն լեզու» դասընթացի համակողմանի վերլուծություն, օտար լեզվի ասպագա մաս-

նագետների ճանաչողական, մասնագիտական պահանջմունքների վերլուծություն, մեթոդական տարբեր համակարգերի զուգադրություն, լատիներենի յուրացման գործընթացում սովորողների լեզվական գիտելիքների ստուգման թեստային հարցում, հետազոտության նախնական վարկածի և առաջարկվող մեթոդական համակարգի փորձարարական ստուգում և կոնկրետացում:

Հետազոտությունը կատարվել է հետևյալ փուլերով.

Առաջին փուլ (2007-2008): Ատենախոսության թեմայի վերաբերյալ մանկավարժամեթոդական համապատասխան գրականության ուսումնասիրում, լատիներենի ուսուցումը բարելավելու նպատակով անհրաժեշտ տեսական դրույթների և արժանահավատ տվյալների առանձնացում, մեթոդական արդիական համակարգի նախնական մշակում:

Երկրորդ փուլ (2008-2009): Հաստատող և ուսուցանող փորձարարական ուսուցման կազմակերպում, փորձարարական ուսուցման ընթացակարգի մշակում և իրականացում, ստացված արդյունքների ընդհանրացում, համակողմանի վերլուծություն և մեկնաբանում, արձանագրված տվյալների վրա հիմնված մեթոդական համակարգի մշակում:

Երրորդ փուլ (2009-2010): Առաջարկվող մեթոդական համակարգի կատարելագործման նպատակով փորձարարական ուսուցման կրկնում, մանկավարժական համալսարանի օտար լեզուների ֆակուլտետում կրկնական հետազոտության արդյունքների հիման վրա եզրակացությունների շարադրում, լատիներենի նպատակաուղղված ուսուցման առաջադրանքների և հանձնարարականների ձևակերպում:

Հետազոտության գիտական նորույթը. ՀՀ ռումանագերմանական ֆակուլտետների համար առաջին անգամ փորձ է արվել ստեղծել լատիներենի ուսուցման նոր մեթոդական համակարգ՝

- հաշվի առնելով լատիներենի ուսուցման և յուրացման առանձնահատկությունները հայալեզու լսարանում,
- սահմանազատելով լատիներենի ուսուցման բանասիրական և մանկավարժական ուղղությունների ընդհանրություններն ու տարբերություններն իրենց ինքնատիպ նպատակներով, բովանդակությամբ և հնարավորություններով հանդերձ,
- հիմնավորելով գիտամեթոդական առաջարկվող համալիրի տեսական և գործնական նշանակությունը, որը հնարավորություն է տալիս «Լատիներեն լեզու» դասընթացի որակն էականորեն բարելավել,
- մշակելով ուսուցման նոր ընթացակարգ, որի միջոցով հնարավոր է վերահսկել ոչ միայն գիտելիքների և ունակությունների յուրացման, այլև գործնականում դրանց կիրառման գործընթացները,
- ավելի արդյունավետ օգտագործելով միջառարկայական կապերի ընձեռած հնարավորությունները:

Հետազոտության տեսական նշանակությունն այն է, որ ի համեմատ լատիներենի ավանդական ուսուցման քարացած պատկերացումների և մոտեցումների, մշակվել է այդ առարկայի ուսուցման բովանդակությունն արդիականացնելու հայեցակարգ, բացահայտվել են վերջինիս կիրառման սկզբունքները, որոնց հիման վրա ձևակերպվել են փորձարարական ուսուցմամբ հաստատված՝ տվյալ գործընթացի բարելավման կոնկրետ հանձնարարականներ: Այդ տեսակետից՝ աշխատանքի տեսական դրույթները կարող են ուղենիշ հանդիսանալ լատիներեն

նի ուսուցման այլևայլ հետազոտությունների և կիրառական մշակումների համար:

Հետազոտության գործնական նշանակությունը.

➤ մեթոդիկայի և առնչակից գիտակարգերի տեսանկյունից հիմնավորվել են լատիներենի արդյունավետ ուսուցման բաղադրիչները,

➤ կազմվել է «Լատիներեն լեզու» դասընթացի ավելի արդիական ուսումնական ծրագիր,

➤ մշակվել են լատիներենի ուսումնասիրության առավել ռացիոնալ մեթոդական հանձնարարականներ, մասնավորապես՝ կարդալու և թարգմանելու ունակությունների և կարողությունների ձևավորման և յուրացման մակարդակը բացահայտելու առաջադրանքներ,

➤ գործնական պարապմունքների համար կազմվել են անհատական և խմբային ինտերակտիվ մեթոդներով աշխատելու առաջադրանքներ,

➤ ուսումնական ծրագրի շրջանակում մշակվել է լատիներեն լեզվով կարդալու և թարգմանելու ունակությունները համակարգված զարգացնելու համալիր վարժություններ,

➤ մանկավարժամեթոդական ուղղվածության օտար լեզուների ֆակուլտետներում լատիներենի դասավանդումը նպատակալաց կազմակերպելու համար մշակվել և հրատարակվել է այդ լեզվի քերականության ուսուցման ձեռնարկ:

Հետազոտության արդյունքների հավաստիությունը և հիմնավորվածությունը ապահովել են առաջ քաշված հիմնադրույթները, տեսականորեն և գործնականորեն հիմնավորված մեթոդների համալիր գործածությունը, հետազոտության օբյեկտի և առարկայի դիդակտիկական և մեթոդական փոխկապակցված համապատասխանությունը և հետազոտության արդյունքում ստացված տվյալների արժանահավատությունը:

Ուսումնասիրության փորձաքննությունը. Փորձաքննության արդյունքները զեկուցվել և հավանության են արժանացել Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի արտասահմանյան լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկայի և օտար լեզուների մասնագիտական ուսուցման ամբիոնների գիտամեթոդական սեմինարներում (2006-2010թթ.), Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի տարեկան գիտաժողովներում (2009թ., 2012թ.), օտար լեզուների դասավանդման խնդիրներին նվիրված «Միջմշակութային հաղորդակցությունը օտար լեզուների ուսուցման միջոցով» միջազգային գիտաժողովում (2012թ.) և Երևանի պետական համալսարանում անցկացված «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» 5-րդ միջազգային գիտաժողովում (2015թ.):

Հետազոտության ներդրումը. Հետազոտության արդյունքները ներդրվել են Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի օտար լեզուների ֆակուլտետի և «Լ. Օրբելու» անվան համալսարանի օտար լեզուների ֆակուլտետի առաջին կուրսերում: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են վեց հոդվածներում և հունամիտար ֆակուլտետների համար նախատեսված ուսումնական ձեռնարկում:

Ուշադրարժան ներկայացվող հիմնական դրույթները.

1. Մանկավարժական ուղղվածության օտար լեզուների մասնագիտական ֆակուլտետներում «Լատիներեն լեզու» դասընթացի ներկայիս բովանդակությունը չի համապատասխանում այդ առարկային ներկայացվող մեթոդյա պահանջներին:

2. Ատենախոսությունում առաջարկվող՝ լատիներենի ուսուցման լրամշակված բովանդակությունը հնարավորություն է ընձեռում՝

➤ էականորեն բարձրացնել լատիներենի ուսումնասիրության ընդհանուր արդյունավետությունը,

➤ ուսանողների մեջ ձևավորել լատիներենի՝ որպես դասական լեզվի գրավոր խոսքի հաղորդակցական պատշաճ ունակություններ,

➤ զարգացնել օտար լեզվի ապագա մասնագետի համար կարևոր լեզվամտաճողության և լեզվական վերլուծություններ կատարելու անհրաժեշտ կարողություններ,

➤ ձևավորել հայերեն, ռուսերեն, լատիներեն և ուսումնասիրվող ռոմանագերմանական լեզուների միջև բազմամակարդակ զուգադրություններ կատարելու կարողություններ:

Նետագոտության կառուցվածքը և ծավալը. Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և վեց հավելվածներից: Աշխատանքի ծավալը համակարգչային շարվածքի 145 էջ է:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, բացահայտվում է աշխատանքի մշակվածության աստիճանը, պարզաբանվում են դրա նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, գիտական վարկածը, ներկայացվում են հետազոտության իրականացման փուլերը, կիրառված մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ստացված արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունը, ինչպես նաև պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, աշխատանքի կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության առաջին՝ «Լատիներենի ուսուցման առանձնահատկությունները ռոմանագերմանական լեզուների մասնագիտական ուսուցման գործընթացում» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ **«Լատիներենի և նրա ուսուցման պատմական զարգացման հիմնադրույթները»** ենթագլխում ներկայացվում են լատիներենի և նրա ուսուցման պատմական զարգացման հաջորդափուլերը, այդ լեզվի դերն ու նշանակությունը ռոմանական լեզուների ձևավորման գործընթացում և դրա չնվազող կենսունակությունը ժամանակակից գիտական տերմինաբանությունում:

Երկրորդ՝ **«Լատիներենի ուսուցման դասական և ժամանակակից մոտեցումները»** ենթագլխում դիտարկվում են լատիներենի ուսուցման ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից մոտեցումները, այդ լեզվի դասավանդման առանձնահատկություններն ու դրանց ինքնատիպ դրսևորումները հայալեզու լաբանում:

Լատիներենի ուսուցումն էականորեն տարբերվում է մերօրյա օտար լեզուների ուսուցումնան գործընթացից: Բանն այն է, որ այն մեթոդները, որոնք արդյունավետ կիրառվում են կենդանի լեզուներն ուսուցանելիս, հիմնականում լիարժեք չեն նպաստում լատիներենի և ոչ խոսակցական այլ լեզուների ուսուցման պարագայում:

Հաշվի առնելով լատիներենի ուսուցման նպատակները և հնարավորությունները՝ օտար լեզուների ֆակուլտետում դրա ուսուցման առավել նպատակասլաց կազմակերպումը ենթադրում է գիտակցական-գուգադրական մեթոդի կիրառությունը, որի հիմքում ընկած է հայերենի և լատիներենի լեզվական երևույթների համադրությունն ու գիտակցված յուրացումը: Տվյալ մեթոդի շրջանակում «Լատիներեն լեզու» դասընթացն իրականացվում է հետևյալ սկզբունքներով՝ լեզվական երևույթների և դրանց կիրառման եղանակների գիտակցական յուրացում, լեզվական երևույթի ձևի, իմաստի և կիրառության փոխկապակցված յուրացում, լեզվական երևույթների գուգադրական ուսումնասիրություն, ուսուցման ենթակա, սակայն մայրենի լեզվում բացակայող լեզվական երևույթների բազմակողմանի վերլուծում և յուրացում:

Լատիներենի ուսուցման գործընթացում կիրառվող մեթոդական հնարքներից իրենց կարևորությամբ առանձնանում են թարգմանությունն ու բացատրությունը: Այդ լեզվով բանավոր հաղորդակցվելու նպատակ չհետապնդելով՝ թարգմանությամբ և բացատրությամբ բացահայտվում են այդ լեզվի կառուցվածքային առանձնահատկությունները, դրանք համադրվում են սովորողներին հայտնի լեզուների հետ, ձևավորվում և զարգանում են ընթերցանական և թարգմանական ունակություններ:

Երրորդ՝ **«Լատիներենի ուսուցման բովանդակությունը օտար լեզուների մասնագիտական դասընթացում»** ենթազխում ներկայացվում է օտար լեզուների ֆակուլտետում իրականացվող «Լատիներեն լեզու» դասընթացի ուսուցման բովանդակությունը՝ այն համալրող բաղադրիչները և դրանց ուսուցման ընթացակարգը:

Օտար լեզուների ֆակուլտետում լատիներենի ուսուցման բովանդակության ուսումնասիրությունն ի հայտ է բերում այդ գործընթացի կազմակերպման երեք հիմնական բաղադրիչներ՝ ա) լեզվաբանական, որն իր մեջ ներառում է լեզվական նյութի՝ հնչյունաբանական, քերականական և բառային նվազագույնի սահմանազատումը, բ) հոգեբանական, որը դրսևորվում է սովորողի գիտակցության վրա առարկայի ներգործության աստիճանով՝ հաշվի առնելով նրա հոգեբանական առանձնահատկությունները և մտածողական կարողությունները, գ) մեթոդական, որն ընդգրկում է մեթոդիկայի կարգերը՝ ուսուցման նպատակը, մոտեցումը, սկզբունքը, մեթոդը, եղանակը և միջոցները, որոնք կոչված են ապահովելու դասընթացի ինչպես գործնական, այնպես էլ կրթադաստիարակչական և մշակութային խնդիրների իրականացումը:

Օտար լեզուների ֆակուլտետում լատիներենի ուսուցման բովանդակության կարևորագույն բաղադրիչը ուսումնական նյութն է, որը ներառում է՝ տեսական գիտելիքներ հնչյունաբանությունից, քերականությունից և բառագիտությունից, ինչպես նաև՝ տեքստային նյութ: Հնչյունաբանական, քերականական և բառային նյութի ընտրությունն ու այն ներկայացնելու փուլերն առավելապես պայմանավարված են ուսուցման գործնական նպատակով և դրա իրականացմանը հատկացված ժամաքանակով: Ինչ վերաբերում է տեքստային նյութին, ապա դրա թե՛ ընտրությունն և թե՛ ուսուցման հիմքում ընդունվում է տվյալ բուհի կամ ֆակուլտետի մասնագիտական կողմնորոշումը:

Օտար լեզուների ֆակուլտետում լատիներենի ուսուցման գործընթացը կարելի է պայմանականորեն բաժանել նախնական և հիմնական փուլերի: Նախնական փուլը նպատակ ունի պարզաբանել այդ լեզվի կարևորությունը ռոմանա-

գերմանական լեզուների յուրացման գործընթացում, ինչպես նաև սովորողներին զինել լատիներեն դասընթացի ծրագրով նախատեսված բառանյութի, հնչյունաբանության և քերականության մասին ընդհանուր գիտելիքներով: Հիմնական փուլի նպատակն է ուսանողների մեջ ձևավորել լատիներեն գրավոր խոսքի տարրական ունակություններ և կարողություններ, զարգացնել ընթերցանական տեխնիկա:

Մի կողմից՝ լատիներենի ուսուցման խիստ անբավարար լսարանային ժամաքանակը, մյուս կողմից՝ մի շարք մեթոդական բնույթի չլուծված խնդիրները բացասաբար են անդրադառնում այդ դասընթացի հանրագումարային արդյունքի վրա, չնայած որ, այն հիմնականում կազմակերպվում է դիդակտիկական և մեթոդական սկզբունքների համաձայն: Օտար լեզուների ֆակուլտետում լատիներենի ուսուցման անբավարար արդյունավետության գլխավոր պատճառը սույն դասընթացի թերի մշակվածությունն է, որի արդյունքում այն համակարգված բնույթ չի կրում:

Ատենախոսության երկրորդ՝ «Լատիներենի ուսուցման արդյունավետության բարձրացման ուղիները» գլուխը բաղկացած է հինգ ենթագլխից:

Առաջին՝ **«Լատիներենի ուսուցման նպատակների և խնդիրների հստակեցումն օտար լեզուների մասնագիտական ֆակուլտետում»** ենթագլխում քննարկվում և հստակեցվում են լատիներենի ուսուցման նպատակները և խնդիրները:

Օտար լեզուների ֆակուլտետում լատիներենի ուսուցումն ունի երեք հիմնական նպատակ՝ գործնական, կրթադաստիարակչական և մշակութային: Լատիներենի ուսուցման ամենաեական առանձնահատկությունն այն է, որ չնայած այլ օտար լեզուների նման սովորողներն ուսումնասիրում են այդ լեզվի հիմունքները, սակայն այն չի հետապնդում համակողմանի հաղորդակցվելու՝ բանավոր և գրավոր տեղեկատվություն փոխանակելու նպատակ: Լատիներենի քննարկվող դասընթացը հետապնդում է շատ ավելի սահմանափակ գործնական նպատակներ, այն է՝ ընթերցելու և ընթերցածը հասկանալու, ինչպես նաև որոշ ասություններ ճիշտ արտասանելու ունակությունների ձևավորում և զարգացում:

Հաշվի առնելով օտար լեզուների և մասնավորապես՝ հայախոս լսարանում լատիներենի ուսուցման առանձնահատկությունները՝ վերջինիս դասավանդման ողջ գործընթացը համարյոթ խնդիրները խմբավորել ենք ըստ իրենց դերի, նշանակության և գործառույթի: Այդ տեսակետից նպատակահարմար է դրանք ներկայացնել, որպես՝ **1)** ուսումնական գործընթացի նախապատրաստական խնդիրներ, **2)** ուսումնական գործընթացի կազմակերպման խնդիրներ, **3)** ուսումնական գործընթացի վերահսկման խնդիրներ: **Առաջին խմբի** խնդիրները վերաբերում են ուսումնական գործընթացի պլանավորման և ծրագրավորման բոլոր կողմերին և պայմաններին, **երկրորդ խմբի** խնդիրներն առնչվում են ուսումնական գործընթացի համակողմանի իրականացմանը, իսկ **երրորդ խմբի** խնդիրներն ընդգրկում են այդ գործընթացի փուլային և հանրագումարային արդյունքների բացահայտումը, ներառյալ՝ ուսանողների մնացորդային գիտելիքների վերահսկումը:

Երկրորդ՝ **«Լատիներենի ուսուցման բովանդակության կատարելագործման բաղադրիչները»** ենթագլխում ներկայացվում են լատիներենի ուսուցումը կազմակերպելու առավել արդյունավետ սկզբունքներն ու մոտեցումները, քննարկվում են այդ լեզվի յուրացման ընթացքում սովորողների կողմից դրսևորած հոգեբանական առանձնահատկությունները:

Ի տարբերություն այլ օտար լեզուների, լատիներենի ուսումնասիրությունն առավել արդյունավետ է, եթե այն հիմնված է հետևյալ առանցքային սկզբունքների վրա՝

➤ լատիներենի յուրացման գործընթացն իրականացվում է սովորողների մայրենի լեզվի գործածությամբ, որն ապահովում է լատիներենի կառուցվածքի համակողմանի գիտակցված, հետևաբար՝ հիմնավոր յուրացում,

➤ լատիներենի դասընթացը հետևողականորեն իրականացվում է գիտակցական-գուգադրական մեթոդով, որը նպաստում է մայրենի և ուսումնասիրվող օտար լեզվի (լեզուների) միջոցով լատիներեն ծրագրային նյութը յուրացնելուն և որի արդյունքում ձևավորվում է ընդհանուր լեզվամտածողություն,

➤ քննարկվող դասընթացը, ըստ ամենայնի, խթանում է լատիներեն լեզվի նկատմամբ սովորողների մասնագիտական և ճանաչողական հետաքրքրությունը, որն ուսուցման արդյունավետության կարևոր նախադրյալներից է:

Մեր կողմից իրականացված փորձարարական ուսուցման ընթացքում կիրառել ենք հետևյալ հիմնական մոտեցումները.

1. Գործնական մոտեցում (ընթերցանության, ուղղագրության, արտասանության ունակությունների ձևավորում և զարգացում): Լատիներենի դասընթացում մեծապես կարևորվում է քերականության ինչպես գործնական, այնպես էլ տեսական ուսուցումը: Վերջինս իրականացվում է բացատրաբար, որի արդյունավետությունը պայմանավորված է սովորողների կողմից նյութի գիտակցված յուրացմամբ:

2. Հարդողակցական մոտեցում, որը լատիներենի ուսուցման պարագայում ինքնատիպ դրսևորումներ ունի: Լատինական հանրահայտ ասույթները և թևավոր արտահայտություններն անգիր արտասանելը, ուսումնական տեքստերի բարձրաձայն ընթերցանությունը և այլն, պարապմունքները դարձնում են էլ ավելի հետաքրքիր, և, որպես դրդապատճառ, նպաստում հանձնարարված նյութի արագ յուրացմանը:

3. Անհատական մոտեցում, որն անհրաժեշտ պայման է ծրագրային նպատակների իրականացման համար: Փորձի վկայությամբ, անհատական մոտեցումը հնարավորություն է ընձեռում ապահովել պատշաճ արդյունավետություն մտավոր այլևայլ կարողությունների, հոգևոր տարբեր կերտվածքի և լեզվական զանազան հակվածության տեր ուսանողների հետ համատեղ աշխատանքում:

Փորձարարական ուսուցման ընթացքում պարզվեց, որ ուսման հանդեպ ուսանողների անտարբեր վերաբերմունքի դրսևորման պատճառ կարող են հանդիսանալ հետևյալ գործոնները՝ **ա)** ուսումնական գործընթացը չի ապահովում գիտելիքների և լեզվահարդողակցական ունակությունների մատչելի յուրացում, **բ)** դասավանդողը չի առաջնորդվում մնացորդային գիտելիքների գերակա սկզբունքով, **գ)** չկան լատիներենի յուրացման իրական դրդապատճառներ, **դ)** բացակայում է ուսման հանդեպ գիտակցական վերաբերմունքը, **ե)** լատիներեն լեզվի ուսումնասիրության նկատմամբ առկա է հետաքրքրության մասնակի կամ լրիվ բացակայություն:

Նշված և մի շարք այլ գործոնների առկայությունն առաջ է քաշում ուսանողների հետ խմբային և ինքնուրույն աշխատանքների պատշաճ կազմակերպման անհրաժեշտություն:

Փորձարարական ուսուցման ընթացքում աստիճանաբար ձևավորվել են այն պայմանները, որոնք, ըստ էության, անհրաժեշտ են մանկավարժական բուհերում

օտար լեզուների մեջ մասնագիտացող ուսանողների՝ լատիներենի ուսուցումը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար: Դրանք են՝

- մասնագիտական, մանկավարժական և հոգեբանական պատրաստվածության տեսակետից դասավանդողի արհեստավարժ անհատականությունը,
- ուսուցման ընթացքում կիրառվող ժամանակակից մեթոդների, եղանակների և ձևերի բազմազանությունը,
- մնացորդային գիտելիքների և լեզվահաղորդակցական ունակությունների միջանկյալ և հանրագումարային ստուգումները,
- ուսանողների հանդեպ ցուցաբերվող տարբերակված մոտեցումը,
- ուսումնառության հանդեպ ուսանողների մեջ հետաքրքրության սիստեմատիկ խթանումը,
- իրականացվող ուսումնական աշխատանքի պարբերական ինքնավերլուծությունը և անհրաժեշտ ճշգրտումներն ու ուղղումները:

Երրորդ՝ **«Հնչյունաբանության ուսուցման եղանակները»** ենթազվխում քննարկվում են լատիներենի դասական և ավանդական արտասանության առանձնահատկությունները, համառոտ ներկայացվում է հնչյունական նյութի ուսուցման գործընթացը, վերլուծվում են լատիներեն տեքստերի ընթերցանության ընթացքում հաճախ հանդիպող սխալների բնույթը և պատճառները, քննարկվում են այդ սխալները կանխելու և վերացնելու համար անհրաժեշտ պայմանները:

Լատիներեն տեքստերի ընթերցանության ընթացքում կարևորվում են արտասանության տևողության բնորոշումը և իմացությունը: Հետևաբար ուսանողների ուշադրությունը հատկապես կենտրոնացվում է լատիներենի ձայնավորների արտասանական տևողության միջև առկա տարբերությունների վրա, ներկայացվում են մինևսին հնչյուլի արտասանության տարբերակները՝ համապատասխան նշաններով հանդերձ, ինչպես օրինակ՝

1. բառակազմության մեջ հնչյուլային հակադրությունները, որոնց իմաստատարբերակիչ հատկանիշը ձայնավորների արտասանության տևողությունն է, օրինակ՝ *cōlo* – քամում եմ, *colo* – մշակում եմ, *os* – ոսկոր, *ōs* – բերան:

2. բառահարաբերական ձևայնությունում նախավերջին ձայնավորի տևողությունը, որը նույնպես ունի իմաստատարբերակիչ նշանակություն, օրինակ՝ *docēre* – երկրորդ խոնարհում, *colere* – երրորդ խոնարհում, *studēre* – երկրորդ խոնարհում, *regere* – երրորդ խոնարհում:

3. քերականական նյութի ընկալման համար ձայնավորի արտասանության տևողության իմացությունը նույնպես խիստ անհրաժեշտ է: Այսպես, առաջին հոլովման գոյականների հոլովական ձևերը տարբերելու համար անհրաժեշտ է իմանալ սովյալ հոլովաձևերի ձայնավորների արտասանության տևողությունը: Ինչպես, օրինակ, *Nominativus singularis – reginā*, *Ablativus singularis – reginā*: Այդ երևույթի անտեղյակությունը զգալիորեն բարդացնում է նախադասությունների թարգմանությունը:

Չորրորդ **«Քերականական նյութի համակարգված ուսուցումը»** ենթազվխում ներկայացվում է օտար լեզուների ֆակուլտետում լատիներենի քերականական նվազագույնը և դրա ուսուցման ընթացակարգը:

Հայտնի է, որ նախքան լեզվական որևէ միավորի կամ երևույթի՝ որպես մի ամբողջության յուրացումը ուսանողը պետք է սովորի ճանաչել դրա առանձին տարբերը, հատկանիշներն ու առանձնահատկությունները: Այդ իսկ պատճառով լատիներեն սովորողների ուշադրությունը նախ և առաջ կենտրոնացվում է ուսու-

ցանվող քերականական երևույթի կարևորագույն կողմերի վրա: Խնդիրն այն է, որ լատիներենի ուսումնասիրության նախնական փուլում ուսանողները հաճախ սխալ են ընկալում գրավոր խոսքում ներկայացված քերականական երևույթները, խախտում են ձևաբանական միավորների սահմանները, աղճատում են խոսքաշարը, որը հանգեցնում է տեքստի սխալ իմաստավորմանը: Հետևաբար անհրաժեշտ է ուսանողների մեջ հետևողականորեն ձևավորվել քերականական երևույթի ամբողջական ընկալում և միաժամանակ՝ գործնականում այդ քերականական երևույթի տարրերը տարանջատելու և համակցելու ունակություններ:

Հաշվի առնելով լատիներեն դասընթացին հատկացված խիստ սահմանափակ ժամաքանակը՝ տվյալ դասընթացի հաջողությունն զգալիորեն պայմանավորվում է քերականական նվազագույնի նպատակահարմար ընտրությամբ: Այն իրականացնելիս առաջնորդվել ենք հետևյալ սկզբունքներով՝

1. հաշվի առնել տվյալ քերականական երևույթի դերն ու նշանակությունն ընթերցանական և թարգմանական ունակություններ գարգացնելու գործընթացում,

2. հաշվի առնել բառանյութի նվազագույնում տվյալ քերականական երևույթների ընդգրկվածության աստիճանը, այսինքն՝ հաճախականությունը:

Օտար լեզուների ֆակուլտետում լատիներենի ուսումնասիրության արդյունավետությունն ապահովելու նախադրյալներից մեկն էլ ուսուցման ենթակա լեզվական երևույթների հերթականությունը ճիշտ սահմանելն է, որը կարող է մեծապես նպաստել դրանց ավելի արագ և համակարգված յուրացմանը: Սույն խնդրի լուծումը ոչ միայն ապահովում է դասընթացի պատշաճ արդյունավետությունը, այլև անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կարճ ժամանակահատվածում անցնելու ուսումնական տեքստերի ուսումնասիրությանը:

Բայի ժամանակաձևերի հաջորդականության հարաբերական կարևորության տեսակետից նպատակահարմար է բայական երկու համակարգերի՝ ինֆեկտի և պերֆեկտի գուգահեռ ուսումնասիրությունը: Նշված հերթականությունը չի հակասում քերականական նվազագույնի ընտրության հիմնական չափանիշներին և հեշտացնում է թե՛ լեզվանյութի ընտրությունը, և թե՛ ընթերցանության համար նախատեսված տեքստերի մշակումը:

Գոյականի հոլովումների մատուցման հաջորդականությունը սահմանելիս մենք առաջնորդվել ենք հետևյալ մոտեցմամբ՝ գոյականի տվյալ հոլովման ուսումնասիրությունից անմիջապես հետո ներկայացվում է միևնույն հոլովմանը պատկանող ածականների խումբը: Նման մոտեցման արդյունքում ստեղծվում է շարունակական ուղիղ և հակադարձ կապ արդեն յուրացված և նոր ուսումնասիրվող լեզվանյութի միջև:

Հինգերորդ՝ **«Ուսանողների ինքնուրույն աշխատանքի վերահսկումը»** ենթագլխում նկարագրվում է առաջադրվող արտալսարանային աշխատանքների ուղղորդման, կազմակերպման և վերահսկման փոխկապակցված համակարգը: Օտար լեզուների ֆակուլտետում լսարանային սուղ դասաժամերի պայմաններում այն վճռորոշ նշանակություն ունի լատիներենի արդյունավետ ուսուցման գործընթացում:

Լատիներենի ուսուցման գործընթացում խստագույն կարևորվում է ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը, որը պահանջում է սովորողների մեջ ձևավորել համապատասխան ունակություններ: Ակնհայտ է, որ մի կողմից՝ լատիներենի ուսուցման ծավալուն բովանդակությունը, մյուս կողմից՝ այդ դասընթացի լսարանային անբավարար դասաժամերը պարտադրում են ծրագրային պահանջ-

ների մի զգալի մասն իրականացնել ուսանողների ինքնուրույն աշխատանքի հաշվին:

Ուսանողների ինքնուրույն աշխատանքը պլանավորելիս պետք է հստակ պատկերացում ունենալ թե՛

➤ ինչ դժվարությունների հետ են բախվում ուսանողներն ինքնուրույն աշխատանք կատարելիս,

➤ տնային ու ր հանձնարարություններն են նրանց համար առավել դժվար և ժամանակատար,

➤ ինչ գործոններով են պայմանավորված այս կամ այն տեսակի և տիպի առաջադրանքների իրականացման դժվարությունները,

➤ ուր գործոնները կարող են բարձրացնել ուսանողների ինքնուրույն աշխատանքի արդյունավետությունը:

Լատիներենի յուրացմանն ուղղված ինքնուրույն առաջադրանքները հաջողությամբ և ժամանակին կատարելու համար, ըստ կարևորության, առանձնացրել ենք հետևյալ պայմանները. **առաջին՝** յուրաքանչյուր առաջադրանք ճիշտ և համակարգված կատարելու կարևորագույն նախապայմանը դրա հստակ ձևակերպումն է, **երկրորդ՝** ուսանողի լսարանային և արտալսարանային աշխատանքը հնարավորինս փոխկապակցված կազմակերպելն է, **երրորդ՝** տվյալ առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ ուսումնասօժանողակ նյութերի առկայությունն է, **չորրորդ՝** լատիներենը յուրացնելու ուսանողի ձգտումը, կամքը, ջանասիրությունը, կարգապահությունը, ինչպես նաև, հետաքրքրությունն ու դրդապատճառը:

Ատենախոսության երրորդ՝ «Լատիներենի դասընթացի կատարելագործման փորձարարական աշխատանքը» գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին **«Ուսանողների կողմից լատիներենի յուրացման չափանիշները և ցուցանիշները»** ենթագլխում ներկայացվում է օտար լեզուների ֆակուլտետում լատիներենից ձեռք բերված սովորողների գիտելիքների և ունակությունների մակարդակը ստուգելու համակարգը:

Լատիներենի յուրացման աստիճանը բացահայտվում է ընթացիկ ստուգման, ներկայացման և ստուգողական թեստերի միջոցով, որոնք կազմվում են ըստ դասընթացի որոշակի փուլերի:

«Լատիներեն լեզու» դասընթացի յուրացման մակարդակը ստուգելու նպատակով՝ յուրաքանչյուր գործնական պարապմունքի առաջին 20-25 րոպեները հատկացվում են հանձնարարված նյութի կրկնությանը, որը միաժամանակ ծառայում է որպես գիտելիքների ստուգման և գնահատման միջոց: Սովորողների լատիներեն լեզվի գիտելիքների ստուգման համեմատաբար նոր ձև է ներկայացումը: Ներկայացման ենթակա թեմաներն ընտրվում են ըստ պայմանական կարևորության, օրինակ՝ հին Հռոմի կառավարման համակարգը, պատմական հանրահայտ դեպքերը, հռոմեական մշակույթը, դիցարանը, հռոմեացի նշանավոր քաղաքական գործիչների և փիլիսոփաների կյանքն ու գործունեությունը և այլն: Ինչ վերաբերում է հանրագումարային ստուգմանը, ապա այն հնարավորություն է ընձեռում մասնակիորեն վերանայել ուսումնասիրման ենթակա լեզվանյութը, բացահայտել յուրացված գիտելիքների ամրության և ճկունության մակարդակը:

Չետագոտության արդյունքում սահմանվել են օտար լեզուների ֆակուլտետում լատիներենի գիտելիքների հաղորդման և ստուգման նպատակահարմար փուլերը: **Առաջին փուլում** հիմնականում ուսուցանվում են ճանաչողական և տե-

սական բնույթի գիտելիքներ: Այն իրականացվում է առաջին մի քանի դասաժամերի ընթացքում: **Երկրորդ փուլը** վերաբերում է բառանյութի և քերականության գործնական ուսուցմանը, ինչպես նաև լատիներեն տեքստերի ընթերցանական հիմնական ունակությունների ձևավորմանը: **Երրորդ փուլը** ներառում է ընթերցանական կարողությունների զարգացման, ինչպես նաև բառապաշարի խորացման և հարստացման գործընթացները: **Չորրորդ փուլում** իրականացվում է լեզվական գիտելիքների և լեզվահաղորդակցական ունակությունների համակարգում:

Վերն ասվածից կարելի է եզրակացնել, որ օտար լեզուների ֆակուլտետում սովորողների լատիներենի յուրացման մակարդակը պայմանավորված է մատուցվող բառանյութի մատչելիությամբ, քերականական երևույթների ներկայացման ռացիոնալ հաջորդականությամբ, ընթերցանական և թարգմանական ունակությունների զարգացման պայմաններով, ասացվածքներն ու թևավոր արտահայտությունները երկարաժամկետ հիշողության մեջ մտապահելու կարողությամբ:

Երկրորդ՝ **«Լատիներենի փորձարարական ուսուցման կազմակերպումը և արդյունքները»** ենթազխում վերլուծվում են հետազոտության արդյունքները, ստուգվում է դրանց և առաջ քաշված վարկածի համապատասխանությունը, հիմնավորվում է առաջարկվող մեթոդական համակարգի արդյունավետությունը:

Փորձարարական ուսուցման կարևոր նպատակներից է լեզվական և խոսքային նյութի ներկայացման փուլային նոր ընթացակարգի արդյունավետության ստուգումը: Նշված ընթացակարգը բաղկացած է հինգ փուլերից: **Առաջին փուլում** սովորողներին համառոտ, բանավոր բացատրվում է ուսումնասիրվող խոսքի մասի էությունը, քերականական կազմությունը և իմաստը: Երկրորդ փուլում հրավիրվում է քերականական այս կամ այն ձևի իմաստային հատուկ նշանակության վրա, ներկայացվում են լեզվական որոշ բաղադրիչներում առկա բառային-քերականական հարաբերությունները, բերվում են օրինակներ և տրվում դրանց հայերեն թարգմանությունները: **Երկրորդ փուլում** սովորողները կատարում են ուսումնասիրվող քերականական նյութի ամրապնդմանն ուղղված մի շարք վարժություններ: **Երրորդ փուլում** ուսումնասիրվող քերականական երևույթը ներկայացվում է ավելի լայն համատեքստով: Յուրացման ենթակա քերականական երևույթը ներկայացվում է ոչ թե առանձին քերականական ձևով, այլ բառակապակցությունների կամ պարզ նախադասությունների միջոցով: **Չորրորդ փուլում** քերականական երևույթների ավելի խոր ուսումնասիրությունը շարունակվում է արտահայտությունների և նախադասությունների հիման վրա: **Հինգերորդ փուլում** սովորողների լեզվական գիտելիքները և ունակությունները փոխակերպվում են գործնական կարողությունների: Այն կազմակերպվում է բնագիր տեքստերի ընթերցանության ու թարգմանության հիման վրա և հանձնարարվում որպես ինքնուրույն աշխատանք:

Իրականացված փորձարարական ուսուցման ընթացքում փորձարարական և ստուգիչ խմբերի լեզվական գիտելիքների և գրավոր հաղորդակցական ունակությունների համեմատական ստուգման արդյունքները բացահայտվել են հատուկ այդ նպատակով կազմված թեստերի միջոցով: Թեստերի տվյալները ցույց են տալիս, որ փորձարարական ուսուցման վերջում փորձարարական խմբերի ուսանողների մոտավորապես 80%-ը ճիշտ են պատասխանել տրված հարցերին և ճիշտ են կատարել հանձնարարված առաջադրանքները (տե՛ս աղյուսակ 1):

2008-2010 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐ					
Լատիմերենի ուսուցման փորձարարական և ստուգիչ խմբերի գիտելիքների և գրավոր հաղորդակցական ունակությունների համեմատական ստուգման ընդհանուր արդյունքները տոկոսներով					
N	ԱՈՒՋԱԳՐԱՆՔ	ՓՈՐՉԱՐԱՐԱԿԱՆ ԽՈՒՄՔ 71 ուսանող		ՄՏՈՒԳԻՉ ԽՈՒՄՔ 73 ուսանող	
		ճիշտ են պատասխանել	սխալ կամ սխալ են պատասխանել	ճիշտ են պատասխանել	սխալ կամ սխալ են պատասխանել
1.	Որոշել նշված բայերի հիմքը, խոնարհումը և խոնարհել բայերը տվյալ ժամանակով	77%	23%	68%	32%
2.	Որոշել խոնարհված բայերի դեմքը, թիվը, սեռը, եղանակը	82%	18%	67%	33%
3.	Հորովել նշված գոյականները	92%	8%	85%	15%
4.	Որոշել, թե նշված գոյականներն ինչ հոլովով են դրված	89%	11%	71%	29%
5.	Համաձայնեցնել ածականը գոյականի հետ և հոլովել	63%	37%	47%	53%
6.	Կազմել նշված ածականների համեմատական և գերադրական աստիճանների ձևերը	77%	23%	63%	37%
7.	Տեքստից դուրս գրել հոլովված գոյականներն ու ածականները և որոշել դրանց քերականական ձևը (հոլովում, հոլով, թիվ, սեռ)	83%	17%	70%	30%
8.	Տեքստից դուրս գրել խոնարհված բայերը և որոշել դրանց քերականական ձևը (խոնարհում, եղանակ, ժամանակ, սեռ, դեմք, թիվ)	82%	18%	60%	40%
9.	Վերլուծել նախադասությունը (ներկայացնել նախադասության անդամների քերականական վերլուծությունը)	79%	21%	66%	34%
10.	Փոխել նշված նախադասության ստորոգյալի թիվը	85%	15%	77%	23%
11.	Նշված նախադասության ստորոգյալը դնել պահանջված ժամանակաձևով	76%	24%	60%	40%
12.	Նշված նախադասությունները դարձնել կրավորական սեռի	83%	17%	71%	29%
13.	Թարգմանել լատիմերենից հայերեն	80%	20%	66%	34%
14.	Թարգմանել հայերենից լատիմերեն	68%	32%	49%	51%
Ընդհանուր արդյունք		80%	20%	66%	34%


Փորձարարական ուսուցման ընթացքում դրսևորված սխալները գերազանցապես վերաբերում են գոյականի և ածականի սեռային համաձայնեցմանը: Խնդիրն այն է, որ հայերենում նման քերականական համաձայնեցում գոյություն չունի և այդ երևույթը սովորաբար ուսանողներին բացատրվում է ռուսերեն օրինակների հիման վրա: Քանի որ ներկայումս շատ ուսանողներ բավարար մակարդակով չեն տիրապետում ռուսերենին, նրանք լիարժեք չեն կարողանում պատկերացնել և յուրացնել քերականական այդ կարևոր երևույթը: Ըստ փորձարարական ուսուցման արդյունքների ուսանողներն ավելի քիչ թվով սխալներ թույլ են տվել բայի հիմքերը շփոթելու արդյունքում: Շփոթության առարկա են հանդիսացել

հատկապես՝ երկրորդ և երրորդ խոնարհման բայերի հիմքերը, որը պայմանավորված է դրանց անորոշ ձևերի նմանությամբ:

Լատիներենի ուսուցման փորձարարական և ստուգիչ խմբերի առաջադիմությունը գնահատվել է չորս չափանիշներով՝ ուսուցման գործընթացի արդյունավետությամբ, ուսումնառության գործընթացի արդյունավետությամբ, ուսանողների ակտիվությամբ և տվյալ դասընթացից նրանց բավարարվածությամբ: Փորձարարական աշխատանքն իրականացվել է նշված չորս ուղղություններով, քանի որ հենց այդ գործոններով է պայմանավորված «Լատիներեն լեզու» դասընթացի ընդհանուր արդյունավետությունը:

Փորձարարական ուսուցման արդյունքում արձանագրվել է փորձարարական խմբերի ակադեմիական առաջադիմության հետևյալ արդյունքները, որոնք բացահայտվել են օբյեկտիվ գնահատականների հիման վրա, դրա համար նախատեսված թեստերի, հարցաթերթիկների, ինչպես նաև բանավոր հարցումների և գրույցների միջոցով (տե ս տրամագիր 1):

Տրամագիր 1



Տրամագիր 1. Փորձարարական և ստուգիչ խմբերի ակադեմիական առաջադիմության արդյունքների դինամիկ աճը

Փորձարարական և ստուգիչ խմբերի տվյալների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ փորձարարական ուսուցման վերջում փորձարարա-

կան խմբերի ուսանողների ակադեմիական առաջադիմությունը բարձր է ստուգիչ խմբերի ուսանողների առաջադիմությունից: Փորձարարական խմբերի ակադեմիական առաջադիմության արդյունքների միջին թվաբանականը փորձարարական ուսուցման վերջում 15%-ով բարձր է ստուգիչ խմբերի ցուցաբերած առաջադիմության արդյունքներից ըստ ուսուցման գործունեության, 15%-ով՝ ըստ ուսումնասիրության գործունեության, 10%-ով՝ ըստ սովորողների ակտիվության և 10%-ով՝ ըստ սովորողների բավարարվածության:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս հանգել հետևյալ կարևոր **եզրակացությունների**.

1. Լատիներենի ավանդական ուսուցման անբավարար արդյունավետության բուն պատճառներն են՝

➤ գործող ուսումնական ծրագրերի գործնական, կրթադաստիարակչական և մշակութային ոչ հստակ ձևակերպված նպատակներն ու խնդիրները բացասաբար են անդրադառնում ուսուցման ողջ համակարգի վրա,

➤ տվյալ դասընթացին հատուկ դասախոսակենտրոն մոտեցումը չի բավարարում ուսուցման արդի պահանջները,

➤ ուսանողները չեն ցուցաբերում պատշաճ առաջադիմություն, որովհետև ուսուցման բովանդակությունը չի համապատասխանում նրանց ակադեմիական պահանջներին:

2. Առաջարկվող մեթոդական համակարգը ներառում է մի շարք նախադրյալներ, որոնք հանդիսանում են լատիներենի արդյունավետ ուսուցման և յուրացման հիմնական պայմանները: Դրանք են՝

➤ անհրաժեշտ է առաջնորդվել լրամշակված ծրագրի դրույթներով,

➤ բարդություն ներկայացնող ուսումնական նյութը պետք է մատուցվի յուրաքանչյուր ուսանողին հասանելի միջոցներով և եղանակով, դիդակտիկական սկզբունքների հիման վրա,

➤ լատիներենի գրավոր թարգմանության ուսուցումը հարկ է սկսել տեքստերի ընդհանուր բովանդակությունը հասկանալու ունակություններ ձևավորելով, այնուհետև հետզհետե դրանք զարգացնել, հասցնելով՝ բառացի թարգմանության կարողությունների մակարդակի,

➤ քերականական ձևերի և շարահյուսական վերլուծությունների հիման վրա անհրաժեշտ է զարգացնել ճկուն լեզվամտածողություն և լեզվի զգացողություն,

➤ լատիներենի յուրաքանչյուր պարապմունքի արդյունավետությունը մեծ մասամբ պայմանավորված է սովորողների ակտիվությամբ, հետաքրքրությամբ, ինչպես նաև ուսումնասիրվող լեզվական երևույթի վերաբերյալ դրսևորվող՝ նրանց ուշադրության աստիճանով,

➤ անհրաժեշտ է ստեղծել շարունակական ուղիղ և հակադարձ կապեր յուրացված և յուրացվող լեզվանյութի, ինչպես նաև լեզվահաղորդակցական ունակությունների միջև:

3. Օտար լեզուների ֆակուլտետում լատիներենի ուսուցման արդյունավետությունը պայմանավորված է նաև այնպիսի գործոններով, ինչպիսիք են՝

➤ լատիներենի ծրագրային յուրացումը պետք է դիտել իբրև՝ օտար լեզվի ապագա մասնագետի կումպետենցիաներից մեկը,

➤ լատիներենի ուսուցման գործընթացն անհրաժեշտ է կազմակերպել ուսանողակենտրոն և ինտերակտիվ մոտեցումներով, ժամանակակից մեթոդներով՝ ցու-

ցաղրության, բացատրության և արդյունավետ վարժությունների ինտենսիվ կիրառությամբ,

➤ լատիներենի ուսուցման գործընթացում հարկ է լայնորեն կիրառել ուսումնառանդակ կառուցում, այդ թվում՝ ուսումնական ժամանակակից տեխնոլոգիաներ (համակարգիչ, համացանց, ձայնարկիչ և այլն),

➤ լատիներենի ուսուցման ակադեմիական խմբերը պետք է համալրել 18-ից ոչ ավելի ուսանողներով,

➤ տվյալ դասընթացին ավանդաբար հատկացվող խիստ սահմանափակ լսարանային ժամերը պարտադրում են մեթոդիկայի հիմունքներով պլանավորել, ուղղորդել և վերահսկել լատիներենի յուրացման ուսանողների արտալսարանային ինքնուրույն աշխատանքը:

Ատենախոսության թեմայով հրատարակվել են.

1. Դերմոյան Լ., Հայրյան Կ., Լատիներենի դասավանդման առանձնահատկություններն օտար լեզուների մասնագիտական ֆակուլտետում, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, 2(5), 2009, էջ 30-35:

2. Դերմոյան Լ., Լատիներենի քերականություն (ուսումնական ձեռնարկ) (2-րդ հրատարակություն), «Հրատարակչական կենտրոն», Երևան 2009, 154 էջ:

3. Դերմոյան Լ., Օտար լեզուների ֆակուլտետում լատիներենի հնչյունաբանության ուսուցման շուրջ, Կրթությունը և գիտությունը Արցախում, Գիտամեթոդական և գիտահանրամատչելի պարբերական սովորողների և ուսուցիչների համար, 1-2, 2010, էջ 22-26:

4. Դերմոյան Լ., Լատիներեն լեզու (ուսումնական ձեռնարկ հումանիտար ֆակուլտետների համար), «Հրատարակչական կենտրոն», Երևան 2010, 154 էջ:

5. Դերմոյան Լ., Օտար լեզուների ֆակուլտետում լատիներենի քերականական նյութի համակարգված ուսուցման վերաբերյալ, Խաչատուր Աբովյանի ծննդյան 200-ամյակին նվիրված ՀՊՄՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 54-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու (2009թ. նոյեմբեր, 19-21), Եր., «Մանկավարժ» հրատ., 2010, էջ 149-152:

6. Դերմոյան Լ., Լատիներեն դասընթացի ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը, Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու (2012թ. դեկտեմբերի 14), II ՊՐԱԿ, Եր., «Մանկավարժ» հրատ., 2014, էջ 213-216:

7. Դերմոյան Լ., Լատիներենի ուսուցման ինքնատիպ դրսևորումները հայկական միջավայրում, «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» V միջազգային գիտաժողովի զեկույցների նյութեր, Եր.: «Էդիթ Պրինտ» հրատ., 2015, էջ 94-97:

8. Դերմոյան Լ., Լատիներենի ուսուցման նպատակների և խնդիրների հստակեցումը որպես արդյունավետության նախապայման, Մանկավարժական միտք, Եր.: «Զանգակ» հրատ., 2015 (4), էջ 138-141:

**АКТУАЛИЗАЦИЯ СОДЕРЖАНИЯ ОБУЧЕНИЯ ЛАТИНСКОМУ ЯЗЫКУ
НА ФАКУЛЬТЕТЕ ИНОСТРАННЫХ ЯЗЫКОВ**

*Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 – “Методика преподавания и воспитания” (латинский язык)
Защита диссертации состоится 12-ого мая 2016 г. в 12⁰⁰ на заседании специализированного совета 020 ВАК “Педагогика” по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Хачатуря Абовяна по адресу: 0010, Ереван, ул. Тигран Мец 17.*

РЕЗЮМЕ

Актуальность исследования: В современных условиях реорганизации и реформирования системы вузовского образования Республики Армения традиционное содержание обучения латинскому языку на факультете иностранных языков уже не соответствует новым требованиям. К числу задач, требующих безотлагательного решения, относится разработка более продуктивной методической системы обучения предмету, что предполагает модернизацию структуры и содержания этой системы, а также применение новейших технологий преподавания, изучение и внедрение передового и образцового опыта обучения.

Обучение латинскому языку является обязательным курсом в процессе подготовки специалистов иностранного языка как с педагогическим, так и с филологическим уклоном. Нынешняя организация обучения латинскому языку в аспекте его общего содержания на факультетах романо-германской филологии не дает возможности реализовывать ни практические, ни образовательно-воспитательные и культурные цели, поставленные в настоящее время перед курсом.

Таким образом, возникает необходимость создания такой методической системы, которая предоставила бы возможность проанализировать и подытожить все факторы, связанные с обучением латинскому языку и его усвоением, а затем моделировать основные положения для разработки более эффективного курса. В качестве важнейших компонентов реализации сказанного мы выделили следующие составляющие:

- изучение и анализ организации обучения латинскому языку на факультете иностранных языков, имеющего специализированную, в частности, педагогико-методическую направленность;
- уточнение целей, подходов, принципов, методов, способов и средств для повышения продуктивности изучения и усвоения латинского языка;
- организация и проведение опытного обучения для подтверждения эффективности предложенной системы обучения.

Цель исследования – разработка теоретических положений для улучшения содержания обучения предмету “Латинский язык” и выявление их фактической продуктивности путем эксперимента.

Задачи исследования:

- Изучение педагогико-методической, лингвистической, психолингвистической, лингвокультурологической литературы, относящейся к латинскому языку и особенностям его изучения.
- Выявление особенностей содержания обучения латинскому языку на современном этапе, его отрицательных сторон, анализ тех концепций и подходов, которые служат основой для существенного улучшения этого курса.

➤ Уточнение и актуализация основных компонентов методической системы обучения латинскому языку, а именно: целей, принципов, методов, способов, средств обучения, а также определение минимума языкового материала, грамматики и коммуникативных способностей.

Научная новизна исследования заключается в:

➤ выявление особенностей обучения и усвоения латинского языка в армяноязычной аудитории;

➤ разграничении специфических целей филологического и педагогического направлений обучения латинскому языку вместе с их содержанием и возможностями;

➤ теоретическом и практическом обосновании нового научно-методического комплекса, способствующего существенному улучшению качества курса “Латинский язык”;

➤ разработке новой системы обучения, посредством которой можно контролировать не только процессы усвоения знаний и способностей, но и их практическое формирование;

➤ повышении продуктивности обучения латинскому языку в процессе подготовки квалифицированных преподавателей иностранного языка благодаря более логическому использованию междисциплинарных связей.

Теоретическая значимость исследования заключается в том, что, в отличие от представлений и подходов многолетнего традиционного обучения латинскому языку, разработана целостная теория обновленного содержания обучения данному предмету, выявлены принципы применения последнего, на основании чего даны экспериментально подтвержденные, конкретные рекомендации для улучшения данного процесса. С этой точки зрения теоретические положения работы могут стать путеводителем для других прикладных исследований и разработок обучения латинскому языку.

Практическая значимость исследования:

➤ составление программы обучения латинскому языку с обновленным содержанием;

➤ обоснование нового содержания практического обучения латинскому языку с точки зрения методики и смежных дисциплин;

➤ разработка методических рекомендаций изучения исходных положений, а также заданий для выявления уровня умений и способностей, сформированных в процессе обучения;

➤ составление общих, индивидуальных и интерактивных учебных заданий для практических занятий;

➤ разработка и публикация пособия по грамматике латинского языка для целенаправленной организации преподавания данного языка на факультетах (отделениях) иностранных языков с педагогическо-методическим уклоном.

Достоверность и обоснованность результатов исследования обеспечивают использование основных положений, комплексное применение теоретически и практически обоснованных методов, соответствие дидактических и методических особенностей объекта и предмета исследования и надежность полученных данных в результате исследования.

Содержание исследования: Диссертация состоит из введения, трех глав, заключения, библиографии и приложений.

По теме диссертации опубликовано шесть статей и учебное пособие.

**Modernisation of the Content of Teaching Latin
at Faculties of Foreign Languages**

*Thesis for the degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.02 –
“Methods of Teaching and Education” (Latin).*

*The defence of the thesis will take place on May 12, 2016 at 12⁰⁰ at the session of the
Specialized pedagogical committee 020 HAC for granting scientific degrees at Khachatur
Abovyan Armenian State Pedagogical University
(Address: Tigran Mets 17, 0010, Yerevan, Republic of Armenia)*

SUMMARY

The actual relevance of the research. Under the circumstances of the restructuring, in particular, current overwhelming reforms in the education system of the Republic of Armenia, the traditional content of teaching Latin to the students of faculties of foreign languages is no longer apt of complying with present-day requirements. The problem of developing a more efficient system of teaching this subject, as an issue among the ones that require the most urgent solutions, presupposes the adjustment of its structure and content, as well as the implementation of modern technologies together with the research and localization of the most progressive and exemplar experience.

Teaching Latin is a compulsory course integrated within the curriculum aimed at both pedagogical and philological specializations. At Faculties of Romance and Germanic Languages the currently determined settings for teaching Latin, namely its general content, does not enable to tackle the present-day practical, educational or cultural objectives.

Subsequently, an urging necessity occurs in designing a new methodological structure that would facilitate to summarise and analyse all the factors of teaching and assimilating Latin, developing thus pattern-based conceptual premises for a more effective teaching.

As a set of the most primary constituents deriving from the basis set forth above we have singled out the following specific objectives:

- Investigating and analysing the current situation in teaching Latin within the curriculum of specialization of foreign languages, particularly, at faculties of pedagogical-methodological specialization;
- Gaining further in means of increasing the efficiency of teaching and assimilating Latin, more precisely – further meticulousness of objectives, approaches, principles, methods, ways and means;
- Designing and carrying out experimental and relevant experiments aimed to improve the content of teaching Latin.

The aim of the research. The research tends to develop the necessary theoretical background for improved content of teaching Latin as an academic subject, and to reveal the factual efficiency of the background through relevant experiments.

The objectives set forth in the research are:

- To study the bibliographic sources and preceding scholarly experience stated in Pedagogy, Linguistics, Psycholinguistics, Linguocultural Studies and all the merging and adherent domains – with special reference to Latin and the peculiarities of teaching Latin;

➤ To uncover the characteristics of the current content determined for teaching Latin revealing the drawbacks and suggesting specific perspectives and approaches that would serve as bases for noticeable improvement of the course of Latin;

➤ To attribute more precision to the basic components of the methodological system of teaching Latin, i.e. the aims, principles, methods, ways, means of teaching, as well as the required minimum of the linguistic material, grammar and communicative skills.

The scientific novelty of the research comprises:

➤ The detection of the peculiarities of teaching and learning Latin in the Armenian realm;

➤ The separation of philological and pedagogical directions in teaching Latin singling out the unique objectives, content and capacities relevant;

➤ A new scientific and methodological development scientifically and methodologically asserted and aimed at considerable improvement of the course of Latin;

➤ Development of a new system of control not only over gaining knowledge and skills, but also the practical use of the knowledge and skills acquired;

➤ The increase of the efficiency of teaching Latin within a high-quality foreign language teachers' development via a more reasonable use of interdisciplinary relations.

The theoretical value of the research is that unlike the long-term perceptions and approaches of traditional teaching of Latin, the research has encompassed a complete (exhaustive) theory of a renewed content of teaching this subject, revealing the principles of its application which serve as a core idea for setting forth discrete guidelines for improving the teaching process on the basis of experiments. From that perspectives, the theoretical statements introduced in the research can serve as guiding principles for applied, as well as theoretical aspect of teaching and other further developments.

The practical value of the research consists of the following constituents:

➤ A new curriculum with a revised content for teaching Latin has been designed,

➤ The new content of practical teaching of Latin has been introduced on the basis of methodology and adherent scientific fields;

➤ A set of innovative methodological guidelines for investigating the initial basics and for revealing the level of skills and competences acquired;

➤ A new set of academic assignments for general, individual and interactive to be used in practical classes have been designed;

➤ Novel methodological guidelines for Teachers have been developed, especially, aimed at creative development of linguo-communicative skills of learners of Latin;

➤ A manual (text book) on Latin Grammar has been designed and published for target-oriented teaching of Latin to the students of different departments of the Faculties of Foreign Languages with pedagogical-methodological specialization.

The assertion and basis of the results of the research are confirmed through the basic principles applied, complex use of theoretically and practically affirmed methods, the correspondence of didactic and methodological peculiarities the object and subject of the research and the reliability of the results of the research.

The content of the research. The dissertation submitted consists of an introduction, three chapters, conclusions, bibliography and appendices.

Six articles on different aspects of the dissertation topic have been published together with the textbook “University Course of Latin” – published to cover some practical recommendations on teaching Latin.

